

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Մոհամմադ Ղանբարի**

**Սանգեսարի բարբառը**

Ժ.02.06 – «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՄԵՂՍԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝** քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Լ. Խաչիկյան  
քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Վ. Ղազարյան

**Առաջատար կազմակերպություն՝** Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մարտի 17-ին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. փետրվարի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար, քանասիրական գիտությունների թեկնածու՝ Ն. Մ. Միմոնյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Ատենախոսության թեմայի արդիականությունը:**

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է Իրանի Մեմնան նահանգի Մանգեսարի բարբառին, որը խոսվում է բուն Մանգեսարում և հարակից Զիարաթում, Թալեբաբադում, Դարգազինում, որտեղ և իրականացվել են դաշտային աշխատանքները:

Վերջին տասնամյակներում իրանական բարբառագիտությունը բավական մեծ զարգացում է ապրում: Իրանական սարահարթի բարբառների և խոսվածքների ուսումնասիրությամբ զբաղվում են թե՛ արտասահմանյան, թե՛ տեղի՝ իրանցի գիտնականներն ու հետազոտողները: Այսօր Իրանում կարելի է հաշվել ավելի քան քառասուն իրանական լեզու, բարբառ և խոսվածք, որոնց միայն մի մասն է ենթարկվել մանրամասն հետազոտման, իսկ շատ բարբառներ դեռևս գտնվում են հավաքագրման սկզբնական փուլում կամ կատարվում են դրանց ուղղությամբ մասնակի աշխատանքներ, կամ էլ ընդհանրապես դուրս են իրանական լեզվաուսումնասիրության ոլորտից: Այսօր Իրանում բավական մեծ թիվ են կազմում այն խոսվածքները, որոնք գտնվում են կորստյան եզրին. դրանցով արդեն խոսում են միայն բնիկ տարեցները: Առավել խոցելի վիճակում են գտնվում այն բարբառները, որոնք չունեն գիր (սանգեսարին ևս այս բարբառների շարքն է դասվում): Այս առումով իրանական բարբառների հետազոտումը, քննությունն ու դասակարգումը մեծ կարևորություն են ներկայացնում ոչ միայն իրանական լեզուների ուսումնասիրության, այլ նաև հարակից շրջանների լեզվական նյութի համեմատական դիտարկումների համար: Գաղտնիք չէ, որ բարբառները և խոսվածքներն արխայիզմների, հին շերտերի կրողն են, և դրանց հետազոտությունը հարուստ նյութ կարող է տրամադրել պատմահամեմատական լեզվաբանության տեսակետից, ինչպես նաև մեծ դերակատարություն ունենալ հնաբանությունների և կորսված բառերի վերականգման համար: Այսպիսով, թեմայի արդիականությունը, առաջին հերթին, պայմանավորված է իրանական բարբառների գրանցման և պահպանման կարևորությամբ:

### **Աշխատանքի նպատակն ու խնդիրները:**

«Մանգեսարի բարբառը» թեկնածուական ատենախոսության նպատակն է Իրանի հյուսիսային մասում տեղակայված Մանգեսարի և

հարակից շրջանների հավաքագրած դաշտային նյութի և թեմային առնչվող առկա գիտական հրապարակումների հիման վրա ընդգրկուն ներկայացնել ուսումնասիրվող բարբառը՝ համաժամանակյա և, որոշակիորեն նաև, տարածամանակյա կտրվածքով: Սույն նպատակն իրագործելու և թեման հնարավորինս բացահայտելու համար առաջադրվել են հետևյալ նպատակները.

Դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված նյութը ենթարկել հնչյունական, քերականական և բառապաշարային համակողմանի քննության:

Պատմահամեմատական դաշտում հետազոտել բարբառի հնչյունական կազմը՝ ձայնավորներն ու բաղաձայնները:

Բացահայտել բարբառի լեզվական նյութը՝ որոշակիորեն դիտարկելով այն համեմատական նյութի համադրմամբ:

Քննել քերականական ձևերն ու նախադասության կազմման միջոցները՝ մատնանշելով դրանց արտահայտման տարբերակները, բերելով օրինակներ:

Ներկայացնել սանգեսարիի բառապաշարը՝ ըստ կիրառության ոլորտների:

**Աշխատանքի գիտական նորույթը:**

Աշխատանքում ներկայացված նյութը քննվել է նոր լույսի ներքո՝ հիմք ընդունելով վերջին շրջանում իրանական բարբառագիտության մոտեցումներն ու ուսումնասիրությունները:

Ատենախոսությունն ընդգրկում է դաշտային աշխատանքների արդյունքում ձեռք բերված բավական լայն նյութ, որը ցայսօր հայտնի չի եղել իրանագիտությանը:

Լիակատար համաժամանակյա և մասամբ տարածամանակյա քննության մեթոդներով առաջին անգամ փորձ է կատարվել ներկայացնել սանգեսարիի ողջ քերականական նյութը՝ հնչյունաբանությանը, ձևաբանությանը:

Դաշտային նյութի արձանագրման շնորհիվ ներկայացրել ենք բառապաշարային շերտեր:

Աշխատանքում առաջադրվել են մինչ այժմ չուսումնասիրված բառերի և քերականական ձևերի մեկնություններ, ստուգաբանություններ:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը):**

Ատենախոսության մեջ քննարկված հարցերը կարող են լայն նյութ տրամադրել իրանական բարբառների հետագա ուսումնասիրությունների համար՝ նոր լույս սփռելով մի շարք խնդիրների լուսաբանման վրա:

Սույն ուսումնասիրությունը կարող է նպաստել թե՛ բուն խմբակից՝ կենտրոնական բարբառների, թե՛ ընդհանրապես իրանական բարբառների համեմատության գործին:

Նոր ստուգաբանությունները և քերականական դրսևորումների արտացոլումն աշխատանքում միտված են օգտակար լինելու հետագա ուսումնասիրությունների համար:

**Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:**

Աշխատանքում զուգադրաբար կիրառվել են նկարագրական և պատմահամեմատական լեզվաբանական մեթոդները: Սույն մեթոդների օգտագործումը պայմանավորված է Սանգեսարի բարբառի թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա լեզվաբանական վերլուծության հանգամանքով:

**Աշխատանքի ժամանակագրական սահմանները:**

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են տվյալ բարբառի զարգացման բոլոր փուլերը, ինչպես նաև իրանական լեզուների հնագույն շրջանը՝ մինչև միջին իրանական լեզվադարաշրջանը: Խնդրո առարկա լեզվական նյութն ընդգրկում է առկա ուսումնասիրությունները, ինչպես նաև գրի առնված նյութերը թե՛ Սանգեսարից, թե՛ հարակից տարածքներից:

**Աշխատանքի փորձաքննությունը:**

Ատենախոսության հիմնական դրույթները լուսաբանվել են “Orientalia” և “Iran & the Caucasus” հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում լույս ընծայված հայերեն և անգլերեն հոդվածներում: Աշխատանքի հետ կապված մի շարք խնդիրներ կայացվել և ամփոփվել են 2008-2012 թթ. Իրանագիտության ամբիոնում կազմակերպված սեմինարների ընթացքում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության են երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը և իրանագիտության ամբիոնը:

**Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը:**

Ատենախոսության հիմնական մասը կազմված է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված երեք գլուխներից, եզրակացու-

թյուններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից: Բացի այս՝ աշխատանքին կից առկա է հավելված, որը ներկայացնում է Սանգեսարի բարբառով գրի առնված տեքստերի նմուշներ:

**Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:**

Ատենախոսության մեջ օգտագործվել են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն և արաբերեն տարաբնույթ աշխատություններ, որոնք վերաբերում են ոչ միայն Սանգեսարի, այլև իրանական լեզուներին ու բարբառներին, ընդհանրապես:

**ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացվում են ընդհանուր տեղեկություններ խնդրո առարկա բարբառի ուսումնասիրության, դրա պատմության վերաբերյալ, ինչպես նաև քննարկվում են Սանգեսարի և հարակից շրջանների աշխարհագրական դիրքն ու տեղանքը, լեզվական նյութի մասին տեղեկություններ, բարբառի խմբային պատկանելությունը, տառադարձության սկզբունքները:

Այս բաժնում դիտարկվում են նաև բարբառի ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները, տրվում է գիտական գրականության տեսություն:

**ԳԼՈՒԽ 1. Հնչյունաբանություն (ենթագլուխներ 1.1 – 1.5)**

Սանգեսարի բարբառը ներկայացնում է հյուսիսարևմտյան իրանական լեզուների կենտրոնական բարբառներին բնորոշ հնչյունական կազմը, առանձնակի տարբերություններ կարող են լինել ձայնավորների արտաբերման երկարության և կարճության մեջ: Ընդհանուր առմամբ՝ սանգեսարին ունի երեսուն հնչյուն:

Ձայնավորների հիմնական առանձնահատկությունները և դրսևորման ձևերը բերված են հետևյալ աղյուսակում.

	<i>Ոչ շրթնային Առաջնալեզվային</i>	<i>Շրթնային Միջլեզվային</i>	<i>Շրթնային Ետնալեզվային</i>
<i>Վերին (Բարձր)</i>	<b>i</b>	<b>u</b>	<b>ū</b>
<i>Միջին</i>	<b>e</b>	<b>ä</b>	<b>o</b>
<i>Ցածր (Ստորին)</i>	<b>a</b>		<b>ā</b>

Ինչպես նկատելի է հարացույցից, Մանգեսարի բարբառի ձայնավորական համակարգը, ժամանակակից պարսկերենի համեմատությամբ, առավել հարուստ է: Եթե պարսկերենում առկա է 6 ձայնավոր, ապա սանգեսարիում՝ 8: Նշենք, որ բավականաչափ հետաքրքրական է ա ձայնավորի եռաստիճան համակարգը՝ կարճ, միջին, երկար:

Սանգեսարիում կան հետևյալ երկհնչյունները՝ *ey*, *ou*.

1. *ey* – համապատասխանում է պարսկերենի *ey* երկհնչյունին, ինչպես՝ *neyzār* «եղեգնուտ», *neydār* «գյուղի անվանում», *yeylum* «բուսատեսակ» և այլն:

2. *ou* (*aw* > *ou*) – համընկնում է պարսկերենի նույն *ou* երկհնչյունի հետ և գլխավորապես հանդիպում է պարսկերենից փոխառյալ բառերում, օրինակ՝ *jou* «գարի» (պրսկ. *jou*), *douri* «ափսե, թաս» (պրսկ. *douri*), *kouli* «գնչու» և այլն:

Ատենախոսության մեջ մանրամասն քննարկվում են ձայնավորական համակարգի հնչյունական պատմական զարգացումները, որոնցից նշենք՝

\**e* > *i* – *riz* «կաթիլ»

\**o* > *ū* – *rūž* «օր»

\**i* > *ä* – *päše* «հայր»

\**u* > *o* – *boz* «այծ»

Ընդհանուր օրենքի համաձայն՝ սանգեսարիում շեշտն ուժային է, որպես կանոն, ընկնում է բառի վերջին վանկի վրա: Այս կանոնը կիրառվում է թե՛ բառածանցումների, թե՛ բաղադրյալ արտահայտությունների դեպքում, օրինակ՝

*dá st* «ձեռք», *dastá* «կոթ, բռնակ»

*moy-xā k* «մայր և քույր»

*moy-xākū n* «մայր և քույրեր»

Նշենք, որ կցականները (ենկլիտիկ) և կապերը շեշտակիր չեն, ինչպես

*dá st-dä* «ձեռք» (ուղիղ խնդիր)

*a ū to* «ես և դու»

Սանգեսարիի բաղաձայնական համակարգը շատ քիչ է տարբերվում պարսկերենից: Բարբառում ճշգրտվել են հետևյալ բաղաձայնները՝ *b*, *p*, *t*, *j*, *č*, *h*, *x*, *d*, *r*, *z*, *ž*, *s*, *š*, *f*, *γ*, *k*, *g*, *l*, *m*, *n*, *v*, *y*. Այսպիսով, սանգեսարիում կարելի է տարբերակել 22 բաղաձայն հնչյուն:

		Շրթնային	Ատամնային	Լնդերային	Քմային	Ետնաքմային	Հագագային	Կտկորդային
Հպական	խուլ	<b>p</b>	<b>t</b>		<b>č</b>	<b>k</b>		
	ձայնեղ	<b>b</b>	<b>d</b>		<b>j</b>	<b>g</b>		
Նեղվածքային	խուլ	<b>f</b>	<b>s</b>		<b>š</b>		<b>x</b>	
	ձայնեղ	<b>v</b>	<b>z</b>		<b>(ž)</b>		<b>γ</b>	
Թրթռացող				<b>r</b>				
Չայնտրղ				<b>l</b>	<b>y</b>			<b>h</b>
Ռնգային		<b>m</b>	<b>n</b>					

Սանգեսարիում նկատվում են հնչյունական զարգացումների հետևյալ դեպքերը: Բառասկզբի դիրքում՝

\*j > ž – žān (պրսկ. zan) «կին»

\*v > v – ve (պրսկ. bād) «քամի»

\*y > y – yūz (պրսկ. jousz) «ընկույզ»

\*θ/f ձուլում r հնչյունից առաջ, ինչպես՝

\*θr, \*fr > h(a)r

pur (պրսկ. pesar) «որդի»

čerä (պրսկ. čehre) «դեմք, երես»

Կան մի շարք դեպքեր, երբ Սանգեսարիի բարբառում նկատվում են արևելյան լեզվական կոնտինուումին հատուկ հնչյունական դրսևորումներ հենց նույն \*θr/fr հնչյունախմբի դեպքում, այսպես՝

\*θr/fr > š

päše (պրսկ. pedar) «հայր»

šä (պրսկ. se) «երեք»

šin- «վաղը»

(hā) šmin «կարգ»

Հյուսիսարևմտաիրանական լեզուներին հատուկ է խուլ շրթնային \*f և խուլ հագագային \*x հնչյունների սղումը \*xt, \*ft հնչյունախմբում: Նշյալ հնչյունական օրինաչափությունը կա նաև սանգեսարիում:

\*xt – dot «դուստր, աղջիկ» (հմմտ. հյս.-արմ. արբիանեի բարբառ՝ döt(a), մինչդեռ պրսկ. doxtar)



\*ft – xot «քնած» (հմմտ. հյւ.-արմ. արյիանեի բարբառ՝ xöt, մինչդէռ պրսկ. xoftan «քնել», xoft «քնած»)

### **Ատամնայիններ**

Սանգեսարիում հին հետձայնավորական ատամնայինները փոխվում են *y*-ի կամ ընդհանրապես անկում են ապրում, ինչպես՝

\*at – ke(y) «տուն» < հ.պրսկ. kataka- > մ.պրսկ. kadag > ն.պրսկ. kade

\*ad – mey «զինի» < հ.պրսկ. mādu- > մ.պրսկ. māy > ն.պրսկ. mey

\*āt – ve «քամի» < հ.պրսկ. vāta- > մ.պրսկ. vād > ն.պրսկ. bād

\*ād – pe «ոտք» < հ.պրսկ. pāda- > մ.պրսկ. pād > ն.պրսկ. pay > pey

\*āθ – ge «փարախ» < հ.պրսկ. gāθu- > մ.պրսկ. gāh «*quh*, վայր, տեղ»

> ն.պրսկ. gāh

### **Շրթնայիններ**

Մինչ \*ā/a և ատամնայինների փոփոխության արդյունքում սանգեսարիում ի հայտ են գալիս երկհնչյուններ, բառավերջի երկհնչյունների օրինակները, մեծ մասամբ, շրթնայինների առավել հազվադեպ փոփոխության արդյունք են, օրինակ՝ \*ap – tou «ջերմություն», ն.պրսկ. tab

\*āp – tou «տենդ, ջերմ», ն.պրսկ. tāb

Բավական ընդհանրական բնույթ է կրում նաև \*afš > ouš անցումը, ինչպես՝ koušer «կոշկակար» (ն.պրսկ. kafš «կոշիկ»), vānouš «մանուշակ» (ն.պրսկ. banafše): Բառավերջի *f* հնչյունը չի սղվում՝ kaf «փրփուր», nāf «պորտ» և այլն: Կապված ատամնային հնչյունների զարգացումների հետ կարելի է նշել նաև հետևյալ դեպքերը:

*Հետբաղաձայնական շրթնայինների ռնգայնացում*

asp > asm «ձի», naqb > naym «ստորգետնյա ջրանցք»

*Տ հնչյունից հետո m շրթնային-ռնգայինի կորուստ*

čašm > čaš «աչք», pašm > paš «բուրդ»

*Ռնգայինների դատաստություն*

namad > lama «թաղիք», mil'aqa > läläyā «ջերեփ, նժար»

*Նախաբաղաձայնական r հնչյունի կորուստ*

-sard > -sat «տարի», dard > dad «ցավ»

Սույն կորուստն առավելապես նկատվում է բայաձևերի մեջ, ինչպես՝

kār – kār-ānd > känd- «անում է»

dār – dār-ānd > dänd- «ունի»

## **\*h** և **'** (*'ayn*)

Կոկորդային ձայնորդ **h** հնչյունը (**h** < \***h**, **θ**) և կոկորդային **'**-ը սղվում են՝ բացառությամբ սկզբնային դիրքերի: Նշենք այս դեպքի որոշ օրինակներ՝

**'** – *t'arif* > *tarif* «պատմում, ներկայացում, զեկույց», *ši'r*, *še'r* > *šer* «բանաստեղծություն»

**h** – *lahje* > *lajä* «բարբառ», *dih*, *deh* > *de* «գյուղ», *sāheb* > *sāb* «տեր»

\***θ** > **h** – *dah-* > *de-* «տալ (բայ)», *mihir* > *mer* «սեր, ընկերություն», *puhr* > *pur* «որդի»

## **ԳԼՈՒԽ 2. Ձևաբանություն** (ենթագլուխներ 2.1 - 2.9)

Հնչյունաբանությանը զուգահեռ՝ Մանգեսարիի ձևաբանությունն ու շարադասությունը ևս համապատասխանում են հյուսիսարևմտյան, կենտրոնական լեզվական հանրույթին: Ինչպես ակնկալվում է, ստորադաս գոյականներն ու ածականները նախորդում են գերադաս գոյականին (օրինակ՝ *'Ali kātāb* «Ալիի գիրքը», մինչդեռ հմմտ. պրսկ. *ketāb-e 'Ali*, դրսևորվում է իզաֆեթային կառույցով): Այսուհանդերձ, սանգեսարին այս լեզվաբանական չափորոշիչով որոշակիորեն առանձին տեղ է զբաղեցնում արևմտափրանական լեզուների շարքում: Այստեղ նկատվում են շարադասական հետևյալ առանձնահատկությունները՝

1. Որոշիչ կառույցները նախորդում են գոյականներին (ինչպես՝ *hamino hasani du kātāb* «Հասանի հենց այն գրքերը»),

2. Մոդալ (կերպային) բայերը միտված են հաջորդելու ստորադասական նախադասություններին:

Մանգեսարիի դերանվանական համակարգը բացառիկ կերպով աչքի է ընկնում այսպես կոչված «ստացական» վերջածանցների լիակատար բացակայությամբ: Մյուս կողմից, սանգեսարին զարգացրել է ցուցական և անձնական դերանունների բավական բարդ համակարգ:

Թեպետ բայի կերպային կամ մոդալ համակարգը այդքան էլ չի տարբերվում մնացյալ իմբակից լեզուների լավ զարգացած համակարգերից, այսուամենայնիվ Մանգեսարին զարգացրել է տեղացույց-ուղեցույց նախդիրների բացառիկ համակարգ: Ընդհանրապես, ինչպես հայտնի է, նախադասության մեջ գոյականի կապը և հարաբերությունները քերականական այլ անդամների հետ, հոլովային համակարգը արտահայտվում են նախադրություններով և ետադրություններով (ինչպես նաև նորմատիվ լեզվում՝ ժամանակակից պարսկերենում):

Մյուս խմբակից բարբառների համեմատությամբ սանգեսարիում մեկից ավել թվականներից հետո գոյականին կարող է հավելվել հոգնակի ցուցիչ, ինչպես՝ šä žinnūn – բոց. «երեք կանայք», panj mirdūn – բոց. «հինգ տղամարդիկ», sey žinnūn dā yūn veri bākošt «հարյուր կանանց այս ձևով սպանեց»: Թեպետ սա հաճախ հանդիպող երևույթ չէ, այնուամենայնիվ նման դրսևորում է ցուցաբերում նաև արիյանեի բարբառը, այսպես՝ sa zanā – բոց. «երեք կանայք», bānj mereá – բոց. «հինգ տղամարդիկ», որտեղ վերջին շեշտակիր –á հնչյունը հոգնակիակերտ ցուցիչն է: Սանգեսարիում մեկից ավելի թվականների հետ կարող է օգտագործվել նաև եզակիով դրվող գոյական, օրինակ՝ du kātāb «երկու գիրք»:

Սանգեսարի բարբառում գոյականը տարբերակում է քերականական սեռի (արական–իգական), թվի (եզակի–հոգնակի), հոդի (որոշյալ–անորոշ) կարգեր: Ինչպես նշվեց, հոլովական համակարգն արտահայտվում է նախդիրների միջոցով, որոնց շարքում առավել զարգացած հարացույց են ներկայացնում տեղացույց-ուղեցույց նախդիրները:

Սանգեսարի բարբառում հոգնակիի կազմությունն ունի երկակի բնույթ: Ինչպես վերևում նշվեց, բարբառում հոգնակիակերտ ցուցիչ է –ūn (հմմտ. պրսկ. –ān) վերջնամասնիկը, օրինակ՝

žinnūn «կանայք»

varūn «գառներ»

Հատկացուցիչ հատկացյալ կապը բառերից մեկի կամ երկուսի հոգնակի դրվելու դեպքում էլ արտահայտվում է հատկացուցչի նախադաս դիրքով՝ հաճախ իզաֆեթային ցուցչի կիրառությամբ, ինչպես՝

bočey-i kātūn «այժի ուլերը»

bočūn-i kātūn «այժերի ուլերը»

Սանգեսարիում կան մի քանի գոյականներ, որոնք հնչյունական կազմով արտահայտում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թիվ, ինչպես՝

murjā «մրջյուն, մրջյուններ»

jujā «ճուտ, ճտեր»

Խնդրո առարկա բարբառում գործածվում է նաև բազմապատկական ձևը՝ գոյականի հոգնակիությունն արտահայտելու համար: Սա խմբակից լեզուների շրջանում բացառիկ երևույթ է: Մույն

կառույցն արտահայտվում է հետևյալ կերպ՝ արմատի կրկնություն գումարած –ուն հոգնակիակերտ վերջավորություն, այսպես՝

žänžinnūn «(շատ) կանայք»

dotdotūn «(շատ) աղջիկներ»

varvarūn «(շատ) գառներ»

Սանգեսարի բարբառում թվականները բաժանվում են երկու խմբի՝ քանակական և դասական: Քերականական սեռի (արական–իգական) հակադրությունը դիտարկվում է մասնակիորեն, դրա առկայությունը որոշակիորեն կամայական բնույթ է կրում:

Սանգեսարիի քանակական թվականները գրեթե ամբողջությամբ համապատասխանում են պարսկերենի քանակական թվականների՝ որոշակի հնչյունական տարբերություններով: Քերականական սեռն արտահայտվում է միայն «մեկ» թվականի պարագայում, որը կարող է ի հայտ գալ նաև որպես անորոշ–միակության հոդ: Կազմության առումով առաջին տասնյակի քանակական թվականները պարզ են՝ yek «մեկ» (հմմտ. պրսկ. yek), du «երկու» (հմմտ. պրսկ. do), šā «երեք» (հմմտ. պրսկ. se), čār «չորս» (հմմտ. պրսկ. čahār) և այլն:

Երկրորդ տասնյակը (11 – 19) ներկայացնող թվականներն ունեն բարդ կառույց՝ բաղկացած են պատմականորեն երկու ձևույթ ներառող թվականներից, որոնք նոր իրանական բոլոր լեզուներում և բարբառներում, համաժամանակյա կտրվածքով ընկալվում են որպես անքակտելի միավորներ: Բառաբարդումը ներառում է առաջին տասնյակի թվականի և հ. իր. \*dasa- «տասը» թվականի երկմիասնույթունը:

Ամբողջական տասնյակները, «հարյուր» թվականը նույնպես թե՛ պատմական և թե՛ համաժամանակյա կտրվածքով պարզ միավորներ են՝ vist «քսան», si «երեսուն», čel «քառասուն», navey «իննսուն» և այլն:

Բացառությամբ dovist (հմմտ. պրսկ. devist) «երկու հարյուր» թվականի՝ մյուս պարագաներում հարյուրավորները կազմվում են առաջին տասնյակի համապատասխան ձևին հավելելով sey «հարյուր» թվականը:

«Հազար» hāzār թվականը ևս թե՛ պատմական և թե՛ համաժամանակյա առումով պարզ միավոր է: Հազարավորները ևս կազմվում են առաջին տասնյակի համապատասխան ձևին հավելելով hāzār «հազար» թվականը, ինչպես panj hāzār «հինգ հազար», haft hāzār

«յոթ հազար» և այլն: Hafsey «յոթ հարյուր» և hašsey «ութ հարյուր» թվականների մեջ տղվում է տասնավորի վերջին –t հնչյունը:

Մանգեսարի բարբառում դասական թվականները ձևավորվում են քանակական թվականներին ավելացնելով –min շեշտակիր վերջածանցը: Առաջին և վերջին բառերը կազմվում են երկու տարբերակներով՝ թե՛ դասականակերտ կցույթով, թե՛ առանց դրա, ինչպես avolmin կամ avol «առաջին», āxar կամ āxarmin «վերջին»:

Ուսումնասիրության ենթակա բարբառում կարելի է տարբերակել դերանունների հետևյալ տիպերը՝ անձնական, անդրադարձ, փոխադարձ, ցուցական, հարցական, որոշյալ, անորոշ և ժխտական:

Անձնական դերանունների համակարգը ներկայացված է ներքոնշյալ աղյուսակում, որը ներառում է դերանունների ուղիղ և թեք հոլովները:

Դեմք	1		2		3	
	Անձ		Ար.	Իգ.	Չեզոք	
Ցուցադիր	+Մոտ	-Մոտ	Չեզոք		+Մոտ	-Մոտ
Եզ. ուղիղ թեք	a ma	to ta	no ne	na ni	yün yüni	nävün nävüni
Հգ. ուղիղ թեք	ham ham	xā xā	änün änün		yünni yünün	nävünni nävünün

Մանգեսարիում անդրադարձ և փոխադարձ դերանունները տարբերակվում են ուղիղ և թեք հոլովներով, ինչպես ցուցադրված է աղյուսակում:

	Անդրադարձ	Փոխադարձ
Ուղիղ	äšte	jinji
Թեք	äštün	jinjiyün / jinjvün

Դերանունների մնացյալ տեսակները մանրամասն ներկայացված են առենախոսության մեջ:

Մանգեսարիում կարելի է տարբերակել ածականի կազմության երկու ձև՝ զուգակցական, որտեղ որոշիչ-որոշյալ շարադասությունը պայմանավորված է և ունի հատուկ ցուցիչ: Ածականի երկրորդ կազմաձևը կոչվում է ոչ զուգակցական, որի դեպքում վերոնշյալ կապն արտահայտվում է առանց որոշակի ցուցիչի: Ըստ այսմ՝ հարաբերական ածականների զուգակցական կազմության ձևերի դեպքում ածականը կրում է –ä վերջնացուցիչը, իսկ որակական ածականների զուգակցական կազմաձևերի պարագայում ածականին հավելվում է –in

վերջածանցը, այսպես՝ *kāl-ä rähün* «անգուտ, չգտված յուղ», *kāl rähün* «անգուտ, չգտված յուղ»:

Սանգեսարի բարբառում որակական ածականի համեմատության աստիճանները կարող են ձևավորվել համադրական միջոցներով: Ընդ որում, վերջիններիս հարաբերությունը նախադասության մյուս անդամների հետ կարող է արտահայտվել հիմնականում վերլուծական միջոցներով: Բարբառում համեմատական աստիճանը կազմվում է դրականին ավելացնելով շեշտակիր *-tar* վերջածանցը, իսկ համեմատվող գոյականը ունենում է *-tün* կամ *-mü* վերջածանցը, և հանգույցի դեր է կատարում *y-* հնչյունը *-tar* համեմատական վերջավորությունից հետո ինչպես՝ *Hasan-mü/tün mas-tar-y-a* «Հասանից նա ավելի մեծ է, նա ավելի մեծ է, քան Հասանը»:

Սանգեսարիում կան համեմատական ածականի կազմման անկանոն ձևեր, ինչպես՝ *xaly* «շատ» - *väšter* «ավելի շատ», *xuy(r)*, *xārä* «լավ» - *veytar* «ավելի լավ»:

Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *-tarin* վերջածանցի միջոցով, որը հավելվում է դրական աստիճանին, օրինակ՝ *mas* «մեծ» - *mastarin* «մեծագույն, ամենամեծ», *žir* «կարճ» - *žirtarin* «ամենակարճ», *γüz* «ուզեղ» - *γüztarin* «ամենաուզեղ» և այլն:

Սանգեսարի բարբառում, ինչպես նաև կենտրոնական լեզվախմբի թվին պատկանող մնացյալ բարբառներում ընդհանրապես այլ խոսքի մասերից լիովին տարանջատված մակբայները չափազանց սակավաթիվ են, դրանք ունեն սահմանափակ կիրառություն:

Սանգեսարի բարբառում գործում է նախդիրների և ետադրությունների բավական զարգացած համակարգ: Կենտրոնական բարբառների շրջանում սանգեսարին ընդհանրապես տարբերվում է մյուսներից իր նախդրատադրային բազմազանությամբ: Սակավ դեպքերում բարբառում կիրառելի է նաև շրջանակային ձևերի գործածությունը: Այստեղ նախդիրն ու ետադրությունը, միջակա հատվածում ներառելով անվանական որևէ եզր կամ արտահայտություն, ստեղծում են շարահյուսական շրջանակ, ինչպես՝ *danu ätäy dä* «սենյակում, սենյակի մեջ»:

<i>Ետադրություններ</i>	<i>Նախդիրներ</i>
<i>dä</i> - 1. հյգ. հոլովի իմաստ, 2. «-ում, մեջ», 3. տր. հոլովի իմաստ, «-ին»	<i>dim</i> - «դեպի»
<i>malä</i> - «-ում, մեջ»	<i>az</i> - «-ից»

dim - «վրա, երեսին»	dā - միայն ներգ. հոլովի իմաստ՝ «-ում, մեջ»
re - 1. հյգ. հոլովի իմաստ, 2. ուղեցույց՝ «ղեպի», 3. «համար, վասն»	sar - «սկզբին, եզրին»
mū(n) - 1. բցռ. հոլովի իմաստ՝ «-ից», 2. գործ. հոլովի իմաստ՝ «-ով»	bā - «ղեպի, -ին»
pārūn - «մոտ, կողքը»	bā - «միասին, հետ, -ով»
danu - «միջից»	tā - «մինչև»
sar «վրա, գլխին»	
dālā «մեջ, ներսում, -ում»	
jālov «առաջ, դիմաց, առջևում»	

Համադաս կապակցություններ և նախադասություններ կազմելու համար Սանգեսարի բարբառում հիմնականում կիրառվում են հետևյալ շաղկապները՝ ա. միավորիչ՝ ū «և, ու», va «և, ու», ham (էլ) ինչպես՝ sari sāli bābo ū no bāme «տարվա սկիզբ եղավ և նա եկավ», բ. միավորիչ հավելական՝ ham ... ham «և՛ ... և՛, է՛լ ... է՛լ», այսպես՝ ham dovxāz bašā ham bāvā dūxtar dā dūsdāndā «և՛ զնա ուզելու, և՛ ասա՛ աղջկան սիրում է», գ. տրոհական-բաժանական շաղկապներ, որոնք են՝ yā «կամ», yā ... yā «կամ ... կամ», ինչպես՝ yā ham xosānūn ya ānūn xosānān «կամ մենք ենք քնում, կամ նրանք են քնում»:

Սանգեսարիում ստորադասական շաղկապները բառային արտահայտման բազմազանության տեսակետից մեծ թիվ չեն կազմում, սակայն միևնույն շաղկապն իր գործառությային նշանակությամբ կարող է լայն կիրառություն ունենալ: Այսպիսով, կախյալ հարաբերություններ կազմելու համար բարբառում վկայված են ներքոնշյալ ստորադասական շաղկապները:

<i>Շաղկապներ</i>		
<i>Համ.</i>	ū «և, ու»	va «և, ու»
	ham «էլ»	ham ... ham «և՛ ... և՛»
	yā «կամ»	yā ... yā «կամ ... կամ»
<i>Ստոր.</i>	kū «թե, որ, որպեսզի, որովհետև, երբ»	vaxti kū «երբ, երբ որ, այն ժամանակ, որ»
	aga «եթե»	aga či «չնայած, չնայած որ»
	tā, dā «որ, որպեսզի»	čün «քանզի, քանի որ»

Սանգեսարի բարբառը ներկայացնում է զարգացած բայական համակարգ, աչքի է ընկնում բայական հարուստ ձևայիններով և

բայափոխություններով: Այն ունի սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ, որոնց մեջ ներառված ժամանակաձևերը հիմնված են բայի երկու՝ ներկայի և անցյալի հիմքերի վրա, ինչպես մնացյալ իրանական լեզուները:

<i>Եղանակ</i>	<i>Ժամանակ</i>
սահմանական	ներկա անցյալ կատարյալ անցյալ անկատար վաղակատար անցյալ վաղակատար ապառնի ներկա շարունակական անցյալ շարունակական
ստորադասական	ներկա-ապառնի (ատրիստ) անցյալ ենթադրական
հրամայական	ներկա

Դիմային վերջավորությունները ծառայում են որոշարկելու դեմքը, թիվը, ինչպես նաև, որոշակիորեն ընդհանրական կերպով, սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները.

	1	2	3	
			Ար.	Իգ.
Եգ.թ. Սահմանական	i	e		
Ստորադասական	i	ä	a / ä	o / ä
Հրամայական	i	ø / e	ä	ä
			—	—
Հգ.թ. Սահմանական	ün	in	än	
Ստորադասական	ün	in	än	
Հրամայական	ün	in	än	

Սահմանական եղանակի ներկա ժամանակը ցույց է տալիս ներկայում ընդհանրապես կատարվող, կրկնվող գործողություն: Պետք է նշել, որ սույն ժամանակաձևի լրիվ նմանությամբ է արտահայտվում նաև ապառնի ժամանակը (ինչպես պարսկերենում): Այն կազմվում է բայի ներկայի հիմքից, որին կցվում են -nd- անկատարության իմաստ արտահայտող ցուցիչը, ինչպես նաև դիմային վերջավորությունները: Սույն ժամանակաձևն արտահայտող բայական օրինակները տրված են աղյուսակում: Ժխտական ձևը կազմվում է շեշտակիր na - ժխտական



նախամասնիկի օգնությամբ, որը դրվում է խոնարհվող բայի սկզբում, ինչպես՝ na-xos-änd-i «չեմ քնում», na-xos-änd-e «չես քնում» և այլն:

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս անցյալում կատարված, ավարտված գործողություն: Սահմանափակում այն կազմվում է բայի անցյալի հիմքից, որի սկզբից ավելանում է կատարելության իմաստ արտահայտող bā- նախամասնիկը, իսկ վերջում կցվում են համապատասխան դիմային վերջավորությունները:

Սահմանականի անցյալ անկատար ժամանակաձևը ցույց է տալիս անցյալում սկսված, սակայն չավարտված, անցյալում ընթացքի մեջ գտնված գործողություն: Այն կազմվում է անկատարության իմաստ արտահայտող mi- նախամասնիկով, որը կցվում է բայի անցյալի հիմքին: Վերջինիս էլ հավելվում են համապատասխան դիմային վերջավորությունները:

Վաղակատար ժամանակը (նան՝ ներկա վաղակատար) ցույց է տալիս անցյալում կատարված մի գործողություն, որն իր արդյունքով կապված է ներկայի հետ: Ժամանակաձևի կազմության համար գործադրվում է bā- կատարելության, ավարտունության նախադաս ցուցիչը՝ կցված բայի անցյալի հիմքին, որին էլ ավելանում են դիմային վերջավորությունները: Պետք է նշել, որ այս ժամանակաձևում սահմանափակ զրոյանում է դիմային միասնական վերջավորություն՝ -a: Ուստի բայաձևի դեմքի և թվի մասին կարելի է եզրակացնել նախադասության մեջ առկա անձնական դերանունների առկայությունից, ինչպես նաև համատեքստից և մտքից:

Սահմանական եղանակի անցյալ վաղակատարը ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն, որն ավարտվել է մինչև մեկ այլ անցյալ ժամանակի գործողության վրա հասնելը: Այս ժամանակաձևում տարբերակվում է անցողական և անանցողական բայերի կազմությունը: Անցողական բայերի դեպքում կազմությունը հետևյալն է՝ bā- կատարելության ցուցիչն ավելանում է բայի անցյալի հիմքին, որից հետո դրվում է boyan «լինել» բայի անցյալի հիմքը՝ առանց դիմային վերջավորությունների:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը ցույց է տալիս մոտ ապագայում կատարվելիք գործողություն: Այն կազմվում է ներկա ժամանակի նմանությամբ՝ բայի ներկայի հիմքից, որին կցվում են -nd- անկատարության իմաստ արտահայտող ցուցիչը, ինչպես նաև դիմային վերջավորությունները:

Սահմանականի ներկա շարունակական ժամանակաձևը, որն իրանական լեզուներում համարվում է բայական նորաբան կազմություն, ունի բարդ վերլուծական կազմություն, որին մասնակցում է Ե «լինել, դառնալ» բայի տեղացույց՝ ներգոյականի իմաստն արտահայտող (locative) նախածանցավոր տարբերակը՝ dab «լինել ներսում, գտնվել ... մեջ»: Սույն ժամանակաձևը կազմվում է այս նախածանցավոր բայի ներկայի հիմքով՝ dar-, որին ավելանում է համապատասխան դիմային վերջավորությունը: Վերջինիցս հետո կցվում է իմաստակիր բայը՝ կրկին ներկայի հիմքով և նորից դիմային վերջավորությունը: Ի դեպ, իմաստակիր բայի ներկայի հիմքը կրկին հանդես է գալիս անկատարության –nd- ցուցիչով:

Սահմանական եղանակի անցյալ շարունակական ժամանակաձևը ևս բայական նորակազմ էրևույթ է: Ժամանակաձևը կազմվում է «լինել ներսում, մեջ» նախածանցավոր բայի անցյալի հիմքով՝ dabi-, որին միանում է դիմային վերջավորությունը: Սրանից հետո, ի տարբերություն ներկա շարունակականի, դրվում է նաև անավարտության իմաստ հաղորդող mi- նախամասնիկը, ապա ավելանում է իմաստակիր բայի անցյալի հիմքը՝ կցված համապատասխան դիմային վերջավորությամբ:

Սանգեսարի բարբառում ստորադասական եղանակը ներկայացված է երկու ժամանակաձևով՝ ներկա-ապառնի (աորիստ) և անցյալ ենթադրական: Ժամանակաձևերը ցույց են տալիս ցանկության, պայմանի, հնարավորությունների, ակնկալիքների հետ կապված գործողություն:

Ստորադասական եղանակի ներկա-ապառնիի ձևավորման համար գործածվում է ba- նախամասնիկով բայի ներկայի հիմքը, որին կցվում են համապատասխան դիմային վերջավորությունները:

Ստորադասական եղանակի անցյալ ենթադրականը կազմվում է bā- նախամասնիկի, բայի անցյալի հիմքի, «լինել» անկանոն բայի ներկայի հիմքի՝ b- և երկրորդ խմբի դիմային վերջավորությունների համադրությամբ:

Սանգեսարի բարբառում հրամայական եղանակը ներկայացնում է միայն մեկ ժամանակաձև՝ ներկա: Հրամայական եղանակը վկայված է միայն երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերով:

	Եզ. թ.	Հգ. թ.
2.	ba-xün «կարդա՛» ba-mün «մնա՛» b-ešt «կանգնի՛ր»	ba-xün-in «կարդացե՛ք» ba-mün-in «մնացե՛ք» b-ešt-in «կանգնե՛ք»

Մանգեսարիում կան մի շարք բայական նախածանցներ, որոնք օժտված են տեղացուցային / ուղեցուցային հատկանիշներով: Մրանք դրսևորում են բավական բարդ հարաբերություններ հոլովային կցույթների հետ: Կարելի է տարբերակել երկու խմբի նախածանցներ. 1. տեղացույց՝ չեզոք-մեջ-դուրս, 2. ուղեցույց՝ չեզոք-վերև-ներքև:

Որոշ դեպքերում նախածանցների այս հիմնական տարբերակումները վերադրվում են ուժգնության իմաստ արտահայտող աստիճաններով, ինչպես՝ dākār «դնել մեջ, -ում» և dūkār «ամբողջովին, լիովին դնել ներս»:

Տեղ. / Ուղ. → ↓	Չեզոք	Վերև	Ներքև
Չեզոք	—	hā	hū
Մեջ	dä	—	dū
Դուրս	vä	vā	—

Մանգեսարիում պատճառականը և, որպես վերջինիս հակադրություն, կրավորական սեռն արտահայտվում են բայահիմքի ներսում: Պատճառականի քերականական կազմիչն է -än- հնչյունախումբը, իսկ կրավորական սեռինը՝ -i/e-, որոնք այս դեպքում դիտվում են որպես միջածանցներ: Այսպես՝ sāz- «կառուցել» → sāzändä «նա կառուցում է (այն)», պատճառական՝ sāzänändä «նա կառուցել է տալիս (այն)» և կրավորական՝ sozindä «կառուցվում է»:

Մանգեսարիում հանգույցի և դրա նախածանցավոր ձևերի հարացույցը տրված է ստորև բերված աղյուսակում:

Եզ.թ.	չեզոք (neutral)		վիճակային (stative)		տեղացույց (locative)		տեղ. վիճ. (համակց.)
	դր.	ժխտ.	դր.	ժխտ.	դր.	ժխտ.	ժխտ.
1.	i	niyi	hasti	nästi	dari	dāniyi	dänästi
2.	e	niye	haste	näste	dare	dāniye	dänäste
3. ար.	a	nä	hasta	nästa	dara	dänä	dänästa
4. իգ.	o	nä	hasto	nästo	darō	dänä	dänästo
հզ.թ.							

1.	ün	niyün	hastün	nästün	darün	däniyün	dänästün
2.	in	niyin	hastin	nästin	darin	däniyin	dänästin
3.	än	niyän	hastän	nästän	darän	däniyän	dänästän

Հանգույցի դրսևորման որոշ օրինակներ՝

yayin i ta to šünde «համոզված եմ, որ դու կգնաս»

yayin däniyi ta ham šünün «համոզված չեմ, որ մենք գնում ենք»

yayin nä ta äštün päše bāšo-(t)a «համոզված չէ, որ իր հայրը գնացել է  
šästä niyi ta pur bu «արժանի չեմ, որ քո որդին լինեմ»

dot-i čašün xali pelä än (hastän) «աղջկա աչքերը շատ գեղեցիկ են»

### **ԳԼՈՒԽ 3. Բառապաշար** (ենթագլուխներ 3.1 – 3.11)

Սանգեսարի բարբառի բառային կազմը գլխավորապես բաղկացած է բնիկ իրանական բառերից, որոնց մեծ մասը համապատասխան զուգահեռներ ունի մնացյալ կենտրոնական բարբառներում: Բառային միավորների մի զգալի մասը ենթարկվել է որոշակի ստուգաբանության՝ միջին պարսկերենի (պահլավերեն) և պարթևերենի համապատասխան զուգահեռների քննությամբ: Որպես համեմատություն՝ բերել ենք նաև ժամանակակից պարսկերենում առկա ձևերը:

#### ***Ազգակցական կապ արտահայտող տերմիններ***

bārār «եղբայր» - մ.պրսկ., պրթ. brād, brādar > ն.պրսկ. barādar, xā «քույր» - մ.պրսկ. xwah, xwaha > ն.պրսկ. xāhar, päšā, päšer-päšā «հայր» - հմմտ. մ.պրսկ., պրթ. peš «առաջ, նախորդ», pešēnag «նախնի» > ն.պրսկ. pišinegān «նախնիներ», päšāžān «խորթ մայր», pur «որդի» - մ.պրսկ. pus, պրթ. puh > ն.պրսկ. pesar, hāli «մորեղբայր» - ն.պրսկ. dā'i, dot «աղջիկ, դուստր» - մ.պրսկ. duxtar > ն.պրսկ. doxtar «դուստր», kotā «երեխա, տղա, որդի» - մ.պրսկ. kōdak > ն.պրսկ. kudak «երեխա», moy «մայր» - մ.պրսկ., պրթ. mād, mādar > ն.պրսկ. mādar, moypäšā «ծնողներ», բրց. «մայր-հայր»

#### ***Մարմնի մասեր անվանող եզրեր***

āl «բերան», bāzu «բազուկ» - մ.պրսկ. bāzūk, bāzūg > ն.պրսկ. bāzu, borčak «մազ, ճակատին կախված խոպոպ» - հվնր. մ.պրսկ. bōr «դարչնագուլյն» և čakāt > čagād «զազաթ, ճակատ» կամ borč և փոքրացուցիչ -ak վերջնամասնիկ, pe «ոտք» - մ.պրսկ. pād > ն.պրսկ. pāy, pišūni «ճակատ» - մ.պրսկ. pešanīg, պարսկերենում էլ կիրառվում է pišāni եզրը, čaš «աչք» - մ.պրսկ. čašm > ն.պրսկ. čašm, češm և այլն:

#### ***Անասնապահական տերմիններ***

assāvār «ձիավոր» - մ.պրսկ. aswār > ն.պրսկ. asbsavār, āxor «մսուր, կերատաշտ» - մ.պրսկ. āxwar «ախոռ, ձիանոց» > ն.պրսկ. āxor «մսուր»,

bočā «ուլ», ն.պրսկ. bače «ձագ», boz «այծ» - մ.պրսկ. buz > ն.պրսկ. boz, jünākā «երկու տարեկան կով, հորթ», dünge «կթելու վայր», kord «հովիվ» - մ.պրսկ. kurd «հովիվ, խաշնարած», ge «ոչխարանոց, փարախ» - հմմտ. պրսկ. gāh «տեղ, վայր» < մ.պրսկ. gāh «վայր, *qubh*», meyk «առաջին կաթնաթորումը» - հվնբ. մ.պրսկ., պրթ. matak > mādag «1. էգ, մատակ, 2. հիմք, սկիզբ», հայ. *մատակ*, varzer «ֆերմեր, անասնապահ» և այլն:

***Երկրագործական և տնայնագործական, կենցաղային բառեր, գործիքների, զենքերի անվանումներ***

ātašgir «գոգաթիակ (աղբ հավաքելու համար)», bāžžän «օղափոխիչ, հովհարիչ», tāšā, tāvor «կացին» - մ.պրսկ. tapar > tabar > ն.պրսկ. tabar, tālvār «ծուռ, միասայր թուր», tāvā, pātil, tāyün «կաթսա» - մ.պրսկ. tāva > ն.պրսկ. tābe, tāve «թավա», tiži «ածելի, սայր, կտրող գործիք» - մ.պրսկ. tēz «սուր, հատու» > ն.պրսկ. tez > tiz, dārat «բիզ», yār «մեծ ափսե» և այլն:

***Կենդանիների, թռչունների անվանումներ***

āhū «եղնիկ, վիթ» - մ.պրսկ. āhūg > ն.պրսկ. āhū, ālla «անգղ», asalmās «մեղու» - հմմտ. մ.պրսկ. magas-ī angubēn «մեղու» > ն.պրսկ. magas «ճանճ», zambur-e asal «մեղու», angebin «մեղր», asm «ձի» - մ.պրսկ. asp > ն.պրսկ. asb, ov «եղնիկ, վիթ», pas «ոչխարներ և այծեր» - կիրառվում է բուն իրանական, արմատական բառը, հ.իբ. pasu- «ոչխար», մինչդեռ պարսկերենում այն չի պահպանվել, օգտագործվում է նկարագրական տարբերակը՝ gusfand (հ.իբ. gau- spənta- ձևից), tašni «վառել», tihu «ջրային թռչուն (տեսակ)» և այլն:

***Բույսեր, խոտեր, թփեր, ծառեր, ընդավորներ, բանջարեղեն***

u. āspānāy «սպանախ» - ն.պրսկ. esfenāj, āspānd «սպանդ», ն.պրսկ. espanđ, āšpidār «սպիտակ բարդի», ojadār «ծփի», tāy «բաղեղ, պատասուկ», tabrizdar «բարդի», ն.պրսկ. tabrizi, tārop, tārob «բողկ» - ն.պրսկ. torobče, čūndar «ճակնդեղ, ճակնդեղի արմատ» - ն.պրսկ. čoqondar, xeyni «հինա» - ն.պրսկ. hena «հինա», xovzā «մամուռ, մամուռխոտ», ն.պրսկ. xaze, šabdar «երեքնուկ» - ն.պրսկ. šabdar, šalām «շաղգամ» - ն.պրսկ. šalyam, kāhu «հազար» - ն.պրսկ. kāhu, gan, gannūm «ցորեն» - մ.պրսկ. gandum > ն.պրսկ. gandom, naxov «սիսեռ» - ն.պրսկ. noxod, vānouš «մանուշակ» - մ.պրսկ. vanafšag > ն.պրսկ. banafša > banafše և այլն:

***բ. Մրգեր, մրգի ծառեր***

ālu, āludār «սալոր, սալորենի», ն.պրսկ. ālu «սալոր», ambe, ambedār «սերկևիլ, սերկևենի» - ն.պրսկ. beh «սերկևիլ», hallok, šatti «փոքր, սև

սալոր», xušā «խաղողի վազ» - ն.պրսկ. xuše, zarašk «կծոխուր, ծոր, գրիշկ», yeysi «չորացրած ծիրան, ծիրանաչիր», limu, limudār «կիտրոն, կիտրոնի ծառ» - ն.պրսկ. limu, mavuš «չամիչ», vemdār «նշենի» և այլն:

***Բնության երևույթներ, աշխարհագրական միավորներ, լուսատուներ***  
abr «ամպ» - մ.պրսկ., պրթ. abr > ն.պրսկ. abr, āsāmūn «երկինք» - մ.պրսկ., պրթ. asmān > ն.պրսկ. āsemān, orīb «լանջ, զառիվայր, թեքվածք», bād, bāddam «քամի, փոթորիկ» - մ.պրսկ. vād > ն.պրսկ. bād, երկրորդ ձևույթը dam > մ.պրսկ. dam-, damidan «փչել», damēnag «հովհար» > ն.պրսկ. dam «շունչ», damidan «փչել», bārān «անձրև» - մ.պրսկ. bārān > ն.պրսկ. bārān «անձրև», čāl, čālā «ժայռ» - ն.պրսկ. čāl, čāle «փոս, հոր», xor «արև» - մ.պրսկ., պրթ. xwaršēd > ն.պրսկ. xoršid, daxmā «անդունդ, վիհ» - մ.պրսկ. daxmag «գերեզման, շիրիմ» > ն.պրսկ. daxme, zānaš «տեղատվություն, տարափ» նաև «փոթորիկ, մրրիկ, բուք», sāye «ստվեր» - մ.պրսկ. sāyag > ն.պրսկ. sāye, kāl «գետ» - մ.պրսկ. kāl > ն.պրսկ. «առու, ջրանցք», varf «ձյուն» - մ.պրսկ., պրթ. vaftr > ն.պրսկ. barf և այլն:

***Կացարանների, սպաստարանների, շինվածքների համար առկա տերմիններ***

ābriz «պետքարան, զուգարան» - ն.պրսկ. ābriz, āmbār «ամբար» - մ.պրսկ. anbār «պաշար» > ն.պրսկ. ambār, bālxūnā «վերնահարկ, ձեղնահարկ», կազմված է երկու բառից bāl «վերև» և xūnā «տուն» - ն.պրսկ. bālāxāne, bar «դուռ» - պրթ. bar, մ.պրսկ. dar > ն.պրսկ. dar, xāšt «աղյուս» - ն.պրսկ. xešt, dārzin «ցանկապատ, ճաղաշարք», ke «տուն» -մ.պրսկ. kadag > ն.պրսկ. kade, հմմտ. մ.պրսկ. xanag > ն.պրսկ. xāne «տուն» kuli «բույն» - մ.պրսկ. \*kolik > kulig, guli «տախտակե առաստաղ», guypal «զուգարան»:

***Ջրադուռների, մասնագիտություններ նշող բառեր***

čuppūn «հովիվ, չոբան» - մ.պրսկ. šubān > ն.պրսկ. čupān, kālāfdūž «գլխարկ կարող» - մ.պրսկ. kulāf «գլխարկ» + \*dōxtan, ն.հ. dōz-, պրթ. ն.հ. dōž- «կարել» > ն.պրսկ. kolāhduz, luti «երաժիշտ» և այլն:

***Հավատալիքային և դավանական եզրեր***

āl, ālžān «ալ, ալահար» - ն.պրսկ. āl, peyyambar «մարգարե» - ն.պրսկ. peyqambar, xādā «աստված» - մ.պրսկ., պրթ. xwadāy «տեր, տիրակալ» > ն.պրսկ. xodā «աստված», fārištā «հրեշտակ» > մ.պրսկ., պրթ. frēštag > ն.պրսկ. ferešte, gib «դև» - պրսկ. giv, հմմտ. մ.պրսկ. (մանիքեական) wīb- «խաբել» և այլն:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով ատենախոսության մեջ առաջադրված հարցերը և ի մի բերելով հիմնական արդյունքները՝ կարելի է նշել, որ.

1. Մանգեսարին Իրանի կենտրոնական բարբառներից է, իր լեզվական չափորոշիչներով առավել մոտ է իրանական լեզուների հյուսիսարևմտյան լեզվաճյուղին:
2. Բարբառը որոշակի մերձավորություն ունի նաև մերձկասպյան բարբառների և խոսվածքների հետ (առավելապես բառապաշարի ոլորտում)՝ կապված տարածքային հարևանակցության հետ:
3. Կենտրոնական բարբառների ուսումնասիրությունը վերջին տարիներին առավել մեծ ուշադրության է արժանացել, թեպետ այս խմբի բարբառներից և լեզուներից շատերը դեռևս համակողմանի և մանրամասն քննության չեն ենթարկվել: Հետևապես, բարբառների գրառումը և ուսումնասիրությունը նպաստում են ոչ միայն կենտրոնական բարբառների, այլ նաև ընդհանրապես իրանական բարբառագիտության քննությանը:
4. Ատենախոսության մեջ քննությունը կատարվել է թե՛ տարածամանակյա, թե՛ համաժամանակյա կտրվածքով:
5. Մանգեսարիի բարբառում առկա են բազում հնաբանություններ և արխաիկ եզրեր, միջին իրանական (պարթևերեն), հյուսիսարևմտյան խմբին հատուկ հնչյունական արտացոլումներ, որոնք էականորեն բարձրացնում են սանգեսարիի հետազոտության կարևորությունը:
6. Մանգեսարի բարբառի ձայնավորական համակարգը, ժամանակակից պարսկերենի համեմատությամբ, առավել հարուստ է: Եթե պարսկերենում առկա է 6 ձայնավոր, ապա սանգեսարիում՝ 8:
7. Մանգեսարին, լինելով արևմտաիրանական լեզուների խմբին պատկանող լեզու, այնուամենայնիվ պարունակում է որոշ արևելաիրանական դրսևորումներ (ինչպես՝ \*š > z, θr/fr > š անցումները):
8. Բարբառի բառային նյութի քննությունը հնարավորություն է ընձեռում վերականգնել կորսված միավորները, որի արդյունքում կարելիություն է ստեղծվում նորմատիվ լեզվում վերականգնել դրանք՝ որոշակիորեն գտելով լեզուն օտարաբանություններից: Նաև այս միտումով է ատենախոսության մեջ ներկայացված բառապաշարի գլուխը:
9. Բառապաշարը քննող գլխում բառային միավորների մեծամասնությունը ենթարկվել է ստուգաբանության, որի արդյունքում վկայաբերվել

են նաև բառային միավորների պահլավերեն և պարթևերեն համապատասխան ձևերը:

10. Անվանական համակարգում սանգեսարին դրսևորում է արական և իգական սեռերի հակադրությունը:
11. Սանգեսարին աչքի է ընկնում դերանունների, մասնավորապես՝ անձնական դերանունների զարգացած համակարգով. անձնական դերանուններն ունեն սեռային տարբերություն, ինչպես նաև թեք և ուղիղ ձևեր:
12. Բարբառում գործում է գոյականի սեռի քերականական կարգը, որը, սակայն, կարող է ունենալ կամայական, ոչ հաստատուն գործածություն:
13. Սանգեսարիում օգտագործվում է նախդրատողային զարգացած համակարգ: Բարբառում ճնշող մեծամասնություն են կազմում ետադրությունները, որոնցից մի քանիսն աչքի են ընկնում գործառնության բազմազանությամբ (օրինակ՝ mū, dā):
14. Սանգեսարին ունի բավական զարգացած բայական համակարգ, աչքի է ընկնում հարուստ բայական ձևային երկու և բայահիմքերով:
15. Բարբառում բայական համակարգում դիտարկվում է արական և իգական սեռի քերականական կարգը, որը դրսևորվում է եզակի երրորդ դեմքում:
16. Սանգեսարիում անցյալ վաղակատարի դեպքում տարբերվում է անցողական և անանցողական բայերի կազմությունը:
17. Սանգեսարիում գործածվում է սահմանական եղանակի շարունակական ժամանակաձևը (continuous, progressive)՝ իր երկու՝ ներկա և անցյալ տարբերակներով, որոնք, ըստ երևույթին, բարբառում տեղ են գտել պարսկերենի անմիջական ազդեցությամբ:
18. Սանգեսարիում թե՛ պատճառականը, թե՛ կրավորական սեռը դրսևորվում են անցողական, ինչպես նաև անանցողական բայերի դեպքում, երկու տիպի բայերի պարագայում էլ կարող են արտացոլվել սեռային միջաձայնները, պատճառականի համար՝ -ān-, կրավորականի համար՝ -i/e-:
19. Ուսումնասիրվող բարբառում բայի ներկա և անցյալ ձևերը կառուցվում են երկու հիմքերի վրա՝ անցյալի և ներկայի, ինչպես իրանական մնացյալ լեզուներում և բարբառներում:



20. Սանգեսարիում մեծ կիրառություն ունեն բայական նախածանցները՝ թե՛ ուղեցույց-տեղացույց, թե՛ ոչ գործուն՝ իրավիճակային՝ արտահայտելով տվյալ գործողությանը համապատասխանող ձև:

#### ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսությանը կից որպես հավելված ներկայացվում են սանգեսարիով գրի առնված տեքստային նմուշներ:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ղանբարի Մ., Սանգեսարը «Շահնամեում», Օրինետալիա, հ. 11, Երևան, 2010, էջեր 111-113:
2. Ghanbari M., “A lexical archaism in Mazandarani”, Iran and the Caucasus, v. 15. 1-2, Leiden-Boston, 2011, pp. 231-233:
3. Ղանբարի Մ., Սանգեսարի բարբառի անձնական դերանունները, Օրինետալիա, հ. 14, 2013, էջեր 166-169:

**Мохаммад Ганбари**

**Диалект Сангесари**

Диссертация на соискание ученой степени кандидата  
филологических наук по специальности 10.02.06  
«ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 17-го марта, 2014 г., в 15.00 часов, на заседании  
специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в  
Институте языка имени Гр. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул.  
Григора Лусаворича 15).

### **РЕЗЮМЕ**

Представляемая диссертация посвящена синхронному и диахроническому изучению и анализу диалекта Сангесара. Работа основана на полевом материале, который собран в Сангесаре, а также в других окрестностях провинции Семнан: Зиарат, Талебабад, Даргазин. Диалект сангесари входит в состав «центральных диалектов» северо-западных иранских языков и вместе с ближайшими диалектами и говорами образует, как бы, суб-группу в северо-западном языковом континууме. Диалект Сангесара целостным образом до сих пор не был объектом всестороннего научного исследования. Не секрет, что диалекты и говоры являются очень ценными носителями архаизмов и древних лингвистических пласт, и их изучение может представлять богатый материал с точки зрения сравнительного анализа иранских языков, а также восстановления древних исконных слов и морфем. Таким образом, выбор объекта, в первую очередь, обусловлен важностью записи и сохранения иранских диалектов.

Во «Введении» определяются тема и рамки исследования, приводятся данные о географическом расположении Сангесара. В этом разделе рассматриваются также источники, в которых впервые засвидетельствован Сангесар. Обсуждается проблема места сангесари среди иранских языков, даются принципы транслитерации и подробный критический анализ научной литературы по данной тематике.

В первой главе – «Фонетика», обсуждается состав вокализма и консонантизма указанного диалекта в синхронном плане. Исследование показывает, что состав гласных диалекта сангесари в основном идентичен с вокализмом родственных диалектов, а консонантизм почти

не отличается от современного персидского. В системе гласных некие различия могут быть связаны с длительностью произношения. В целом, в сангесари имеются тридцать фонем. Общие особенности гласных в сангесари приводятся в нижеследующем таблице:

	<i>Не лабиальный Пред-языковой</i>	<i>Лабиальный Центральный</i>	<i>Лабиальный Пост-языковой</i>
<i>Верхний</i>	<b>i</b>	<b>u</b>	<b>ū</b>
<i>Средний</i>	<b>e</b>	<b>ä</b>	<b>o</b>
<i>Нижний</i>	<b>a</b>		<b>ā</b>

В данной главе гласные также рассматриваются в диахроническом порядке: даются фонетические развития гласных.

Вторая глава – «Морфология», посвящена подробному анализу морфологического строя диалекта сангесари. В ходе изложения материала частично освещаются вопросы синтаксиса. Главным образом, дается синхронно-описательный анализ диалекта, однако, в отдельных случаях, для внесения ясности разные языковые проявления рассматриваются также с точки зрения диахронического развития. Морфология и синтаксис диалекта сангесари тоже соответствуют параметрам северо-западного континуума. Сангесари имеет очень развитый местоименный и глагольный строй. Полностью отсутствуют энклитические местоимения. В диалекте действует развитая система предлогов и послелогов.

В третьей главе изучается словарный запас диалекта. Приводятся более важные сферы: слова касающиеся родственных отношении, бытовые, сельскохозяйственные, скотоводческие термины, названия части тела, названия флоры и фауны, разные явления природы, названия зданий, религиозные слова и так далее. Подробное изучение диалекта показывает, что большая часть словарного запаса состоит из иранских элементов, здесь имеется большое количество архаизмов. В работе, в случаях ряда слов, приводятся этимологии, даются параллельные варианты среднеперсидского и парфянского.

В «Заключении» диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

«Приложение» включает образцы текстов на указанном диалекте.

**Mohammad Ghanbari**  
**Sangesari dialect**

A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,  
The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages).  
*The defence will take place at 15.00, on 17 March, 2014, at the session of  
the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation  
Commission) to award degrees in the Institute of Language after H. Acharyan  
of National Academy of Sciences, RA (address: 0015, Yerevan, st. Grigor  
Lusavorich, 15)*

**Summary**

The current dissertation deals with synchronic and diachronic research and analysis of the dialect of Sangesar. The study is greatly based on the fieldwork which has been carried out in Sangesar as well as in neighbouring areas of Semnan province: Ziarat, Talebabad, and Dargazin. The Sangesari dialect belongs to the “central dialects” of the north-western Iranian languages and together with nearby dialects forms a sub-group in the north-western Iranian linguistic continuum. The Sangesari dialect has not been a subject of holistic and detailed approach of scientific research so far. It is well known that dialects are valuable bearers of archaic elements and ancient linguistic layers. Therefore, the study of each dialect can afford a vast opportunity for comparative analyses in the field of Iranian languages and, on the other hand, for restoration of ancient words and morphemes. Thus, the choice of the material is connected with the high importance of recording and preserving of Iranian dialects.

The introduction is devoted to the definition of frameworks of the research. The geographical location of Sangesar is clarified. In this part of dissertation historical issues are also discussed and the sources which keep first attestations about Sangesar are presented. The author discusses matters connected with the linguistic data, the place of Sangesari in the Iranian linguistic group, the principles of transliteration. Also detailed critical analysis of scientific literature is given.

The first chapter entitled “Phonetics” the structure of vocalism and consonantism of the dialect in question is discussed. The research shows that the vocalic system of Sangesari is generally identical with the vocalism of neighboring dialects and the consonantism is almost the same as in modern Persian. In the vowel system some varieties can be noticed connected with the pronouncing durability. In whole, Sangesari has got thirty letters. The vowels are given below:

	<i>Non-labial Pre-lingual</i>	<i>Labial Central</i>	<i>Labial Post-lingual</i>
<i>Upper</i>	<b>i</b>	<b>u</b>	<b>ū</b>
<i>Middle</i>	<b>e</b>	<b>ä</b>	<b>o</b>
<i>Lower</i>	<b>a</b>		<b>ā</b>

The vowels are discussed in diachronic order; the phonetic developments are presented.

The second chapter called “Morphology” is devoted to the detailed analysis of morphological structures of Sangesari dialect. In the course of description of the material questions connected with the syntax are partly taken up. Essentially, synchronic-descriptive analysis of the given dialect is put in discussion. However, diachronic approach is also taken into consideration for making clearer different parts of the material. Sangesari has a very developed pronominal and verbal structure. Enclitic pronouns are fully out of use. In the Sangesari dialect there exists a well-developed system of prepositions and postpositions.

The third chapter deals with the word baggage of the dialect. The chapter is divided into several parts according to appropriate semantic spheres; family names, domestic, agricultural, cattle-breeding terms, parts of body, words concerning flora and fauna, different appearances of nature, names of structures and buildings, religious terms, etc. A circumstantial study of the issue indicates the indisputable fact that a vast majority of the Sangesari dialect consists of Iranian elements and archaic word components. In the current chapter, in case of many words, etymologies are mentioned and parallel variants of Middle Persian and Parthian languages are given.

In Conclusion the whole observations and conclusions generalizing the material are listed.

The appendix involves texts in Sangesari which clearly indicate the grammatical and linguistic situation of the dialect.